



Ա Բ Ա Բ Ա Տ

ԹԻՒ Ե. — ԵՐԱԾՈՒ Ժ. 1885 ՏՈՐԻ Ժ. ՅՈՒՆԻ 31.

ԿՐՈՆԱԿԱՆ

ԱՍՊԻԳԱԼՈՅ Ե  
1952 թ.

90

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՍՍ ԱՌԱՋԵԼՈԿՈՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՐԵ ՊԱՏՄՈՒԹՅԻՆ.

( ԵՐԵՎԱՆԻ. ԱՐԵՐԱԴ. 1885 թ. 2. )

Գլ. ՓԱ.

Յագրատունեաց վերօին Դադկի 1015 թուին Կ. Պոլիս տարուելով կործանուեց Յագրատունեաց հարստոթիւնը. և Հայրապետական Աթոռը, որ անբաժան էր արքունական գահայքից՝ հեթարկուեց առանձինականութեան։ Վիմեանց յաջորդող Հայրապետութիւնը ժողովրդի անդորրութեան, աշխարհի շինութեան և եկեղեցւոյ պաշտպանութեան համար տառապում։ ին մաքառելով մոլեռանդն և կրօնամնը յոյների ու մահմետականների դէմ բանիւ և գործով։ Հայրապետականների ջանքն էր զիջուցանել թշնամեաց անոլոք ցառումը գէղ ի ժողովուրդը, և ժողովրդին կապել եկեղեցու հետ։

Գրիգոր Գ. Պահլաւունի քսանամեայ հասակում կաթուղիկոս օծուելուց յետոյ սկարտաւորուեց թէ արտօքին թշնամեաց գէմ

մաքառել և թէ ներքին խռովութեան տռաջքը տռնել՝ որ պահանջութեան էր իւր պատանեկան հաստիում կաթուղիկոս ընտրուելը։ Ա Աղթամարայ Դաւիթ Արքեպիսկոպոսի իւր կռաստիցների ձեռնուութեամբ վարդանցելով Զորոց վանքում կաթուղիկոս օծուելը ու Աղթամարում իւր աթոռը հաստատելը։ որ մինչեւ զարդ գոյւթիւն ունի։

Գրիգոր Գ. այս չորեաց տռաջքը տռնելու համար 1114 թուին Սեաւ—լերան Յ. Ժողովը զումորեց։ ուր ներկայ էին մօտ 2000 անձինք։ Ժողովը ընդունելով Գրիգոր Գ. Պահառուուն օրինաւոր յաջորդ Հայրապետական աթոռոց հակաթուու Հրատարակեց Դաւիթին և նպուից նորան ու նորա համախոչներին։ որո՞ք ըմբռուացել էին օրինաւոր Հայրապետի դեմ։ Յստ հաւաճական կարծեաց՝ այս ժողովում առհմանուց կաթուղիկոսի ընտրութեան ժամանակ կարեւոր հշանակութիւն տալ Բնիւոյ, Հայրապետ, Քաղէի Առաքելոյ վանից և Տաթևու արքեպիսկոպոսներին։ Ժողովը իւր որոշումը շրջաբերականով հասցրեց ի լուր Արեւելեան Հայոց եպիսկոպոսներին և իշխաններին, որո՞ք համակերպելով ժողովի վճռին՝ մերժեցին Դաւիթի կաթուղիկոսութիւնը։

Գրիգոր Գ. որ մասդիր էր Հայրապետական աթոռը Հայտառանի կեզրօնը վոխապրել, տեսնելով պատերազմական արհաւիրքները որածութիւնները և ժողովրդի այլ և այլ կողմեր ցրուիլը, Սեաւ—լերան Կարմիր վանիրից և այն ևս միայն կարճ ժամանակ 1125 թուին փոխապրեց Խարբերուու մօտ Շովիք կոչեցեալ իւր Հայրենի գղեակը, իւր եղբայր Ներսէսին եպիսկոպոս ձեռնադրեց և Հայտառանեացա այցելու կարգեց և սկսեց վարել իւր Հայրապետական իշխանութիւնը գործակյութեամբ Ներսէսին որ իւր ընտիր բարեմատնութեամբ, Հոգեբուղիս վարդապետութեամբ և Հոգիաշունչ քրուանքներով նառշնալի մականունն ստացաւ։

Մինչ Գրիգոր Գ. և իւր եղբայրն Ներսէս Շնորհալի եկեղեցու պայծառութեան և ժողովրդի բարոյական և կրօնական կրթութեան համար էին հոգում, ոկտեց արևանեաց այն արշաւանքը՝ որ յոյտնի է «Խաչակրաց արշաւանք» անուամբ, և այսպէս էր կոչվում։ որովհետեւ զինուորները՝ իրանց Հագուստի վերայ կարմիր խաչ էին կրում։ Այս արշաւանքների նպատակն էր Կրուսազէմը մահմետականների ձեռքից ու բռնութիւններից ազատել։

Խաչակրաց արշաւանք յարդարողը Հռովմայ պապերն էին, որոնց նպատակն էր Ա. Երուսաղէմն ազատելու պատրութկու իրանց գերիշխութիւնը արևելեան քրիստոնէից վերայ ևս տարածել։ Յունական կոյսիրութիւնը նկատելով որ Խաչակրաց արշաւանքը իւր տէրութեան համար վասնգաւոր կարող է լինել երբ և իցէ, ոչ միայն ոչ ինչ նպաստ չէր ընձեռում, այլ ամեն ջանք գործ էր դնում խափանել այդ արշաւանքը։ Խոկ Հայք, որ Փոքր—Սահայում և Կիլիկիոյում նշանաւոր տեղ էին բւնում, և հիմն էին դրել Յուրինեան իշխանապետութեան, Յունաց բոլորովին հակառակը վարուեցին և ոչինչ քրիստոնյոցին. զինուորներ և ուղեցոյցներ տուին, հսկագին ճանապարհորդութեան և ուտեսով պիտոյքը և իշխանք խազուկիր առպետների ու իշխանների հետ խնամութիւն սկսելով՝ մի տեսակ ընտանութիւն հաստատեցին, որ յետոյ մինասարեր հետեւնք ունեցաւ Հայոց համար. վասն զի մինչ Հայք զգուած Յունաց և Մահմետականաց մոլհուանդութիւնից ու Հարստահարութիւնից օգնում էին խաչակրաց, որ նոյանով թուլանացին ու կործանուեին իրանց տիրող և տաելի գարձած պետութիւնները, Հռովմայ Հայրապետները արևելեան քրիստոնէից ևս իրանց իշխանութեան տակ առնելու և կաթոլիկութեան մէջ ձւելելու ջանքեր էին անում աքնելով ջնջել աղջային եկեղեցւոյ աղջային յառկութիւնները։

Պապերի հետ յարաբերութիւնը սկսուեց Ահաբիոքայ լատին եպիսկոպոսի գործերի պատճառավ կարգուած ժողովից, ուր Գրիգոր Գ. Պահլաւունին և Ներսէս Շնորհալին ևս հրտիրուեցին. Ժողովից յետոյ Գրիգոր Գ. Պահլաւունի Հռովմայ պապի դեսպանի հետ գնաց Երուսաղէմ յերկրօպագութիւն անօրինական տեղեաց, իսկ Ներսէս Շնորհալի վերապարձու Շուք՝ կոթուզիկոսարանի գործերին վերահասութիւն գործելու։ — Պապի դեսպանը պատշաճ առիթ համարելով հայ Հայրապետի ներկայութիւնը, Երուսաղէմի Ա. Ահօն եկեղեցում, 1141 թ. Ժողով կազմեց ուր ի միջի ոյլոց խոսուեց Հայաստանեայց եկեղեցւոյ գաւանութեան, եկեղեցական արարողութեան և աղջային ծէսերի մասին։ Գրիգոր Գ. Պահլաւունի իմաստութեամբ և հմայութեամբ յարմարաւոր պատասխանները տալով՝ ըստ Երեւութիւն ցրեց լոտին և յոյն կղերի տարակուսութիւնները Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառութեան մասին։ Բայց ինչպէս երեւում բառին և յոյն կղերը նորա-

Համար։ Համակիր երեացին որ տռաւել եւս՝ մուերմութիւն հաստատեն, որպէս զի աւելի եւս դիւրութեամբ կարողանան թակարգել՝ սիրոյ և միտրանութեան պատրուակն հրապար զնելով։ ուստի և Երուսաղեմի ժողովից յետոյ պատի զեսպանը Գրիգոր Գ. Պահլաւունու բարեմասնութիւնները յայտնեց պապին՝ որ հայրապետական քող և գաւաղան ուղարկեց Գրիգորի Գ.-ին զործածութեան համար։

Գրիգոր Գ. Պահլաւունի Երուսաղեմից երբ որ միերազտրձաւ, Թղկուրան աւանի Առիւծ կոչեցեալ իշխանից ստացած զրութեամբ իմացաւ որ ինչ ինչ մօլորութիւններ սկսել էին երնան գալ Միջագեաքի Ամոյք և Շողթան գաւառի հայ և ոսորի ժողովրդեան մէջ։ Մոլորամիտներից սմանք կարծումէին Յիսուսի համար թէ Աստուածութիւնն չարչարուեց մեռաւ, ունանք ել՝ թէ միայն մարմինը մեռաւ։ այլք՝ թէ խաչին պէտք չէ երկրպագել, որովհետեւ նիւթէ։ ունանք մասաղը լուգունումէին իոկ ունանք ոչ։ որոխար իմանալի և օրինակի համար առաջ էին ընդունում և ոչ թէ ճշմարիտ էութիւն։ և այս մօլորութիւնը մինչեւ Թոնդրակեցւոց աղոնդի հերետիկոսութեանն էր հասել։ Բացի այս մօլորութիւններից, ասորի և հայ ժողովրդեան մէջ ահագին խռովութիւն կար իւրաքանչիւր տղգի ծխական արարողութեան համար։ Ասորիք պախարակումէին հայերին ասելով որ, Հայք հրեաքար են բաղարջ հացով պատարագում։ Հայք մեղաղրումէին ասորիներին ասելով թէ, Ասորիք խմօրուն և Ճիթաղանգ հացով են պատարագում։

Այս մօլութեանց և խռովութեանց առաջքը առնելու համար Գրիգոր Գ. Պահլաւունի իւր եղբայր Ներսէս Շնորհալու Ճեղքով գրեց նոյն Թղկուրանի իշխանին Հայաստանեայցու եկեղեցւոյ գաւանութիւնը ի գիտութիւն բոլոր ժողովրդոց։ Այս զրութիւնը հարկաւոր աղղեցութիւնը գործեց և շատերը իմանալով իրանց մօլորութիւնը, գործան յուղղութիւն։

Միայն կրօնական վէճերի տագնապը չէր որ Հայ ժողովրդի վիճակը դառնացնումէր և միաքը պղտորում դէսի մալր եկեղեցին։ Հոյրապետարանը անելանելի զրութեան մէջ էր մանաւանդ նորանով, որ բռնաւորների աւելածութիւններն ու սրածութիւնները հայ ժողովրդեան և հայ եկեղեցւն կորուստ էին սղաւնում։ ուստի Գրիգոր Գ. Պահլաւունի, որպէս զի Հոյրապետական աթոռն էլ զոհ չք գնայ բռնաւորների կատաղութեանը։

1147 թուին փոխազրեց Հռոմելոյ կոչեցեալ դղետեկը՝ որ Աստինոցոց իշխանութեան տակ էր, Եփրատ գետի տփին, այնաեղ՝ ուր Մարզման գետը կիսաշրջան կազմելով խռունկումէ Եփրատին։ Դրիգոր Գ. Հայրապետական աթոռը փոխազրելոց յետոյ լատին իշխաններից գնեց Հռոմելան և Հայրապետականի սեպհականութիւն գարձնելով մի Հոյակառ զմբեթարդ եկեղեցից էլ շինեց այն տեղ։

Դրիգոր Գ. Խոչտերաց արշաւանքի տափթով արեւելք Եկած կախովիկ իշխանների և Հոգեօրականների հետ ծանօթ լինելով նոցա միջացաւ բորեկամական յարաբերութեան մէջ էր Հռոմելոյ պապի հետ։ Նո բարեկամական յարաբերութիւն սկսեց նաև Յունաց հետ և այս յարաբերութեան միջնորդն էր Ամբրոնի Օշին իշխանը։ որ Դրիգորի եղբար դուեր այրն էր։

Այս բարեկամական յարաբերութիւնը կրօնական բանակցութեան պատճառ գարձաւ հետեւել գէտքով։ Ամբրոնի Օշին իշխանի և Առարինեան Թորոս իշխանապետի մէջ խռովութիւն կար։ Օշին օժանդակումէր Յունաց իշխանութեան զօրանալուն, և Ճեռնուռ էր նոյտ։ ընդ գէմ Թորոսի։ իսկ Թորոս յունական նենգութիւններից ի սիրո և ի հոգի վշտացած՝ ձգուումէր անկախութեան, և սաստիկ նեզն էր ձգել Օշինին։ Դրիգոր Գ. Պահառանի այս խռովութեանց առաջքը առնելու համար Շնորհալուն հաշտարար միջնորդ ուղարկեց Երկու իշխանների մէջ։ Ներսէս ստանձնեալ գործը ըստ երեւութին յաջողութեամբ վերջայնելուց յետոյ վերապարձին՝ Մամետական քաղաքում հանդիսեց Յունաց Կու Մանուէլ կայսեր փետոյ Ալէքս Կոմնինոս զքորն։ Խօսակցութիւնը շուտով կրօնականի փոխուեց և Ներսէս իւր խօսակցի մխոքը գէտ ի Հայաստանեայց եկեղեցու ուղղափառութիւնը շինելու համար թղթով ներկայացրեց նորան Հայաստանեայց Եկեղեցւոյ գաւանութիւնը։

Այս թուղթը Ալէքս Կոմնինոս անձամբ ներկայացրեց կայսեր, որ խնդամաբար ընդունելով՝ միութեան համար սկսեց բանակցութիւն Հայ Հայրապետանոցի հետ և իւր Սմբատ անուամբ պալատական սպասաւորին թղթով յանուն Գրիգոր Գ. կաթուղիկոսի ուղարկեց Հռոմելոյ։ Այս թղթով կայսրը առաջարկումէր կաթուղիկոսին Սմբատի հետ Կ. Պոլիս ուղարկել ներսէսին՝ հարկաւոր բանակցութեան համար։ բայց մինչեւ որ կայսեր թուղթը և

Տրաւիրակը կը հունի Հռոմէ այս վահաճանեց Գրիգոր Գ. Պահաւունի յաջորդ թողնելով իւր կրտսեր եղբայր և զորչակից Ներսէսին. ուստի և, Սմբատ՝ կոյսեր թուղթը յանձնեց Ներսէս Շնորհալուն, որ զբաղութք լինելով Հայրապետութան զործերով՝ ըլեւրողացաւ գնալ Պօլիս:

Ներսէսի ընտրութիւնը եղաւ հետեւեաւ կերպով. Գրիգոր Գ. 1165 թուին Հռոմելայի Ա. Ժողովը գումարեց, ուր յայտնելով իւր անկարապութիւնը վարել Հայրապետութան իշխանութիւն ծերութեան և ակարութեան պատճառով առաջարկեց ընտրել նոր Հայրապետ։ Ժողովը առանց աշակիր լինելու Շնորհալու հրաժարաւմներին, նորսի ընտրեց կաթողիկոս որին Գրիգոր Գ. Հանդիսաւոր կերպով օնելուց յետոյ իրեւ Հայրապետի երկրպագելով՝ առաջարկեց նորոն Հայրապետութան քողն ու պատճառը և առանձնոցաւ, որ եւ մի քանի ամսից յետոյ վախճանեց նոյն թուին և թողուեց Հռոմելոյում իւր առաջուց պատրաստած շիրմի մէջ։

Գրիգոր Գ. Կաթողիկոսի օրով բացի իւր եղբայր Ներսէս Շնորհալուց հոջակաւոր էին իրեւ եկեղեցական մատենագիրներ իւր աշակերտակից և Կարմիր վանքի վանահայր Հոջակաւոր Սուփրոնիոս վանահայր մօտ ուսեալ Սարգիս Շնորհալի և Եղիսաբէտ վարդապետ։ Սարգիս Շնորհալին Կաթողիկոսայց թղթոց մեկնութիւնը գրեց ընտիր և խմուտալից սճայ, իսկ Եղիսաբէտ՝ նոյն Գրիգոր Գ.-ի առաջարկութեամբ՝ Վուկանու աւետար մի մեկնութիւնը գրեց գարձեալ ընտիր և խմուտալից սճայ։ Նշանաւոր էին դարձեալ Սամուել Անեցիս որ պատմական մի համառօտ ժամանակագրութիւն պատրաստեց, Ատոմէս Աւահայեցի, որ « Խոչակաց արշաւանքը » վիպագրեց, և այլք։

Գրիգոր Գ. Պահաւունի բացի հայ գրականութեան սատարելուց իրախուսելով գիտակ անձանց և պատշաճապես նոցո ընդունակութիւնը ի գործ զնելով՝ գրեց Աւետեալ տօնի « Խորհուրդն անձառ » և Երկրորդ Ծաղկագարդի « Մեծահրաշ ոյս խորհուրդ » շարականները ու ի պատմիւ Ա. Առևաւորչի՝ « Ե յելոն արեւու արեւ » մեղեղին։

## Ա.

Միջագետոց Ամսոյք և Շպղթան գաւառի մալորելոց համար նորհարակու ձեռքով Գրիգոր Դ. Պահառուունու զրած թղթի համառութիւնը<sup>\*</sup>):

Ա. Ասելն Օխուսի համար «Երեկ»՝ ցոյց է տալիս նորա գոյակցութիւնը կօր Աստուծոյ հետ՝ առաջ քան դյափանեանս — Այսօր՝ նորա փրկական տնօրէնութիւնները յետ մարդեղութեան — Այսն և յաւիտեանս՝ բանին և մարմեոյ անվախճան յաւիտենական լինելը։ Օխուս Քրիստոսի արտասովին քաղցնուլը ելն։ մարդկութեան կրից արտայայտութիւնքն են ի կ ժուեալներին տիրաբար յարուցանելն ու ասելը. «Ես և Հայրն իմ մը եմք՝ աստուածային զօրութեան ապացոյցն են։ Օխուս իւր անձին մէջ միաց ունելով աստուածային և մարդկային բնութիւնները. մարդկութեամբն՝ մեռաւ և աստուածուածութեամբն՝ անմահ մնաց։ Եւ Օխուսի մի անձին մէջ բնութեանց մեռարութեան համար նշյն անձին է լնծայմում մահն ու անմահ մեալը. «Եթէ ոչ բնութիւն անմահին Աստուծոյ չարչարեցաւ և մեռաւ. . . . այլ մը և նշյն Աստուած և մարդ՝ մեռաւ ըստ Աստուածութեան. . . . և վասն պյուրիկ Աստուած իսչեալ ասի և չարչարանիք Աստուծոյ և արիւն և մահ»<sup>\*\*</sup>)։

Ի. Զատկի տօնին կամ ննջեցելոց յիշատակի համար մատաղը չար պէտք չէ համարել որովհետ՝ հրեականին հետեւողաբար չէ Զատկի կամ ննջեցելոց յիշատակի մատաղը. հրեականին հետեւողութեամբ կատարելը և նորա պրեամբ թողութիւն յուսալը ոչ միայն խոտելի է. այլ և վնասակար, որովհետեւ պյուրիկ վարուողը յայտնումէ թէ զեռ Քրիստոսի արեամբ մեղքից չէ ազատուած. այլ դարձեալ ստուերտիկան օրէնքին է ծառայում. Բայց մատաղը ոլեաբ է կատարել ոչ թէ իրրե դոչ. այլ իրրե աղքատներին ողորմութիւն. Մատաղը սահմանել է Յուրը Կրիտօր Լուսաւորիչ հրամայելով ժողովրդին իւր ունեցածներից տասանորդ տալ եկեղեցւոյ պաշտօնէից և անբան կորերին մատուցած զոհերի փոխանակ մատաղ անել. նախապէս օրհնած աղուտեցնելով կենդանուն. մատաղից յատկացեալ տեղերը. որոնք են երին և մորթին եկեղեցական պաշտօնէից մասնաւորելուց յետոյ՝ մնացեալը իրրե ողորմութիւն՝ բաժանել աղքատներին. Աղովեալ լինի ով որ այս մտքով չի անիլ մատաղը. այլ հրեաբար կամ հեթանոսաբար կանի. Կոկ մատաղի աղը պէտք է օրհնել որովհետեւ Պօղոս առաբեալը հրամայումէ. ոչ միայն Աստուծոյ նուիրեալները այլև հասարակաց կերակուրն ու ըմպելին ևս պէտք է աշօթք ով և Աստուծոյ խօսքով սրբել և ապա ուտել. — Գայթակղեալ են

(\*) Ընդհ. Ներս. Շնորհ. տպ. յիշմ. 1865 յերես 333—400 (Թուղթ Գրիգորիաթուղթիկասի և Միջագետաց Ասորւց)։ (\*\*\*) Նոյն երես 333—349։

Ասորիք՝ որոնք ամենայն պիղծ բան օրհնութեամբ սրբուած համարելով՝ ուտումեն, բայց հայոց պանրից զգուշանումեն. թէ մի գուցէ զատկի գառան խախացով ( պանրի մայեայ ) մակարդած լինի. Մատաղները երիք տեսակ են Ա. Զատկի ( ախար ) Բ. Տեառնական՝ իրքեւ նշան գոհութեան երախտեացն Աստուծոյ և Գ. Ննջեցելոց յիշատակի համար՝ իրքեւ տուրը ողորմութեան \*).

Գ. Ամանք կարծումն թէ Աստուծոյ դրախտն, որոյ մասին Մոլոկոսը գրեց չըկայ. չըկան կենաց և զիտութեան ծառեր. և ոչ նիւթեղէն պառեղ՝ որ Ադամ կերած լինի, այլ միայն օրինակի համար են զրուած: — Որոնք կասեն թէ դրախտ չըկայ. և Ադամ յառաջագոյն այն տեղ չէ եղել նորա մէջ ժանելուն արժանի չըլինին, այլ նոցա դէմ, յիմոր կցյսերի նման, դրախտի դուռը փակուի: Եւ թէ, Ադամայ դրախտը էր նիւթական էութիւն \*\*):

Դ. Ամանք Թոնդրակեցւոց հետեւելով ասումն մարդկանցից շինուածը չէ եկեղեցի այլ մայն մարդիկը են: Չեն ընդունում Վաշտոց զերբը և իաչու եկեղեցի օրհնելը: — Իրախտը եկեղեցու ստուերատիոնն էր. ինչպէս մարդը ճաշակելով Յիսուսի մարմն և արիւնը՝ համարվումէ ընդունարան Յիսուսի նոյնպէս և նիւթական շենքը ընդունելով իւր մէջ հաւատացելոց բազմութիւն կոչվումէ ըստ երրայեցւոց՝ Եկեղեցի. իսկ ըստ Հայոցս՝ Ֆողովարան. և որովհետեւ Յիսուս Քրիստոս եկեղեցումն է պատարագվում. ուստի և եկեղեցին կոչվումէ տուն Աստուծոյ. Եթէ Մովսէսի խորանը և Սողոմոնի տաճարը որ եկեղեցու ստուերն է օրինակն էին Աստուծոյ փառաց ընդունարան դարձան, ո՞րչափ ևս առաւել եկեղեցին:

Խաչը ընդունելով որպէս աթոռ, որից անբաժան է Յիսուսի իաշելութեան տիպը՝ պէտք է երիրպագութիւն և պաշտօն մատուցանենք և այն՝ ոչ թէ նիւթեղէն աթոռին. այլ խաչեցեալ Յիսուսին և այս՝ խրատուած սուրբ առաքեալներից. ինչպէս որ մարմնաւոր աշքով սորա նիւթը և ձեր անվրէպ տեսնումնք նշյնպէս էլ հոգւոյ աշքով ու հաւատով սորա մէջ միացած Աստուծոյ աներեւոյթ զօրութիւնն ենք տեսնում:

Հնումն Առաքեալները և նոցա յաջորդները խաչը կազմումէին քառակե նիւթից և ձեռները գնելով նորա վերայ աղօմում էին, որով զդալի նիւթը իմանալի զօրութիւն էր ընդունում և ապա կանգնեցնելով արեւելեան կողմը. հրամայումէին հաւատացեալներին երկրպագութիւն մատուցանել: Յետոյ եկողները անկարող լինելով բերանացի խաչ օրհնել. սահմանեցին խաչ օրհնելու կանոնը և խաչը պէտք է լուանալ ջրով և զինով և ապա դրոշմել սուրբ մեռոնով որ ի և զգայականին՝ սուրբ Հոգւոյ զօրութիւնը ըստ իմանալոյն հանդչի նորա վերայ. Այսպէս պէտք է կատարել նաև եկեղեցւոյ նաւակատիքը օրհնութեամբ և օնանելով \*\*\*):

Ե. Ծիսարանը որ կարգաւորուած լինելով Մաշտց'ց՝ մաշտոց է կոչվում, պէտք է ընդունել. Արժեն այնպիսիսներին՝ օրոնք կասկած կը յայտնեն եկեղեցւոյ շնորհաց համար \*\*\*\*):

(\*) Ընդհ. երես 350—266. (\*\*) Նոյն 366—373. (\*\*\*) Ընդհ. երես 374—380.

(\*\*\*\*) Նուն 380—381.

Զ. Նզովեալ լինին նոքա, որոնք կասեն թէ Յիսուս նախ քան ծնանելը մարմին ուներ, և նոքա՝ որոնք կասեն թէ Յիսուսի մարմնառութիւնը կառարուեց միայն թանձրանալով, ըստ օրինակի ցրտից սառած ջրի \* ).

Է. Մոլորվումնն որ ասումեն Աստուած աչք, ականջ, ձեռք ևլն. ունի. — Եմն բան որ մարմին է՝ զգալի է, իսկ այն՝ որ անմարմին է՝ իմանալի է. և որովհետև Աստուած անմարմին է, ուրեմն և իմանալի է, ուրեմն և չունի ձեռք, աչք ևլն. իսկ Աստուածոյ աչք, ձեռք վերագրելը միայն նորա անեւ կավթ զօրութիւնը յայտնելու համար է \*\*\* ).

### Բ.

Հայաստանիայցս եկեղեցւոյ կարգը \*\*\*), որ գրեց Ներսէս Շնորհալի առ Ալէքս Կոմնինոս դուքս՝ փեսայ Կիո Մանուէլ կայսեր.

Ա. Յիսուսի ծնունդը տօնվումէ Յունուարի վեցին, որովհետև Ապրիլի 7ին տօնվումէ Աւետեաց տօնը, որ եթէ Մարտի 25ին տօնուեր, այն ժամանակ Եղիսարեթի յշութիւնը Թշրինի 10ին կամ Սեպտեմբերի 27ին, այս ինքն պաշտամանց օրերի սկզբին կընկներ. մինչդեռ պաշտաման օրերից յետոյ պիտի Զաքարիան գնար տուն և այն ևս ոչ թէ Երուսաղէմ, այլ լեռնակողմները. իսկ պաշտամանց օրերի լրանալը գալիս է Թշրինի 22ին կամ Հոկտեմբերի 9ին. Մկրտութեան տօնն ևս նոյն Յունվարի վեցին է տօնվում որովհետև ըստ Աւետարանի՝ Յիսուս 30 տարեկան էր որ մկրտուեց, ըստ հաւանական կարծեաց՝ իւր ծննդեան օրը. Եւ այսպէս է տօնում Հայաստանիայցս եկեղեցին՝ որովհետև սկզբում բոլոր եկեղեցիքը այդպէս էին տօնում. յետ յ ոմանք, որովհետև Ծննդեան օրը Մկրտութիւնն ևս տօնելով չէին կարողանում Թեթղէհէմ և Յորդանան միանդամայն գնալ, ուստի և բաժանեցին պյտ երկու տօները, որ հետզհետէ սովորական դարձաւ \*\*\*\*).

Բ. Մի բնութիւն ենք ընդունում Քրիստոսի մէջ ոչ ըստ Եւտիքէս հերետիկոսի, այլ ըստ Աթանասի և Սիւրղի Ալէքսանդրացւոյ. իսկ մի բնութիւն ասումենք Բանի և մարմնոյ անբաժանելի և անճառ միաւորութեան համար. և նզովումնենք նոցա, որոնք Նեստորին հետեւլով բաժանումնենք Բանն ու մարմնը \*\*\*\*\*).

Գ. Ընդունումնենք և յարգում տէրունական և սրբոց պատկերները, որ նկարումնենք եկեղեցում, Խաչը եթէ մետաղից է, բեւեռով չենք պնդում, իսկ եթէ փայտից՝ բեւեռով ամրացնումնք.

Դ. «Սուրբ Աստուած» սրբասացութիւնը երգումնք ի դէմն միայն Որդւոյ և «Խաչեցար» ասելով նորա մեծագոյն երախտիքն ենք յիշում,

(\*) Ընդհ. 381—392. (\*\*) Նոյն 392—400. (\*\*\*) Նոյն եր. 117—144.  
\*\*\*\*) Նոյն եր. 126—128. (\*\*\*\*\*) Նոյն եր. 129—130.

ապա դիմելով Սուրբ Աստուածածնին՝ աղաջումնենք որ մեր աղօթքը իւր  
Պրդուն մատուցանի, մեզ փորձութիւնից ու գտանգներից փրկելու համար\*).

Ե. Քառասնորդաց պահքին շաբաթ և կիւրակէ օրերը կաթնեղէն և ձու  
չներ ուտում. այլ այդ բանը եթէ կայ՝ իմրեւ բացառութիւն կատարվումէ  
անժուժկալ մարդկանցից \*\*).

Զ. Անապակ գինիով ենք պատարագում, նախ որ. Ա. Գրիգոր Լուսաւո-  
րիչ նախնի հայրերից ընդունելով՝ այսպէս է աւանդել մեզ. Բ. Յիսուս վեր-  
նատան մէջ բաժակը իրրեւ իւր արիւն առաջարկեց աշակերտներին առանց  
ջրի անուն տալու. թէ գինի էր բաժակը, յայտնի է նորանով որ իսկոյն ա-  
սաց. «Յայսմիետէ ոչ ևս արբից ի բերոյ որթոյ», Կողաչոս ջուրը ի խոր-  
հուրդ մկրտութեան, իսկ արիւնը ի խորհուրդ պատարագի ենք ընդունում.  
առ այս վկայութիւն ունենալով նաև Յովհան Ռոկերերանի մեկնութիւնը և  
այլ սուրբ հարց գրուածքները \*\*\*).

Է. Խաչը միանգամ ևեթ ենք օրհնում ըստ կանոնի առաքելական սուրբ  
եկեղեցւոյ.—Զրպարտութիւն է ասելը թէ իւրաքանչիւր տարի կրկնու-  
մենք \*\*\*\*).

Ծ. Զգրսկարտութիւն է ասելը թէ Հայք կարծումն որ Յիսուս մեզ հա-  
մագոյակից թանձր և չարչարելի մարմին չառաւ սուրբ կուսից, այլ անօսր-  
անչարչարելի և անեղանելի.—Քրիստոսին ընդունումենք Աստուած և մարդ-  
մարդկութեամբն մեզ համագոյակից, իսկ Աստուածութեամբն Հօր և Ա.  
Հոգւոյն. Նոյն ինքն մի Աստուածութիւն անբաժանելի, ըստ աստուածայինն  
մնութեան՝ երկնային, պարզ, անչարչարելի և անմահ, իսկ ըստ մարդկայինն  
մնութեան՝ երկրաւոր, թանձր, չարչարելի և մահկանացու. Քրիստոսի Աս-  
տուածային և մարդկային միացեալ բնութեան մէջ ըստ Նեստորի ոմն և  
մն չենք ընդունում, որովհետեւ միաւորութիւնից յետոյ վերցվումէ եր-  
կուութիւնը \*\*\*\*\*).

Թ. Յունաց կարծելը թէ մենք Առաջաւորաց պահքը պահումենք ի պա-  
տիւ ոմն կախարդ Սարգսի որ ունէր էշ և սկունդ.—զրպարտութիւն և եղջեր-  
աւաղ առասպել է.—Առաջաւորաց պահքը հաստատել է Ա. Լուսաւորիչ,  
առաջարկելով պատուհասեալ նորահաւաս Տրդատ թագաւորին և ժողովը-  
քեան իրրեւ պաշխարութիւն պահել հինգ որ. Այս պահքը Առաջաւորաց  
է կոչվում, որովհետեւ Հայտաստանեայց համար առաջին պահքն է և իւրա-  
քանչիւր տարի պահքումէ ի յիշատակ դարձի ի քրիստոնէութիւն. Այս  
պահք ուրբաթ օրը տօնվումէ Նինուէացւոց պաշխարութեան յիշատակը,  
ցոյց տալու համար թէ. ինչպէս Նինուէացիք պաշխարելով փրկուեցին,  
նզինպէս և պատուհասեալ հայ թագաւորն ու ժողովուրդը պաշխարելով  
տապայան բժշկութիւն.

Խոկ պահքը սուրբ Սարգսի անուամբ է տօնվում, որովհետեւ պահքոց շա-  
բաթը օրը տօնվումէ սուրբ Սարգիս զօրավարի տօնը. (որ Կապադովիկիայից էր և

(\*) Անդ. Եր. 132—133. (\*\*) Նոյն Եր. 133—134. (\*\*\*) Նոյն Եր. 134—136.

(\*\*\*\*) Նոյն 136—137. (\*\*\*\*\*) Նոյն Եր. 137—141.

ուրացեալն Յուլիանոսից հալածեալ գնաց Պարսկաստան, ուր շատերի քրիստոնէութեան պատճառ դառնալուց յետոյ նահատակուեց Յունվարի 30ին և ըստ յարմարադատութեան տօնվումէ Առաջաւորաց պահոց շաբաթ օրը՝<sup>1)</sup>։

Մասնաւութեցինք Ա. Աստուածածնի յարգութեան, Սուրբ մեռունի նիւթի և այլ այլ այսպիսեաց վերաբերեալ Յունաց կասկածների ցրումն, որովհետեւ անտեղի էին, Եթէ այն ժամանակ ի պատիւ Ա. Աստուածածնի միայն կիւրակէ և տէրունական օրերին էին յատկացեալ շաբականներ երդում՝ այժմ ամենայն օր են երգում։

### Գ.Լ. ԺԲ.

Ներսէս Շնորհալի կամ Կլայեցի (Հռոմկլայի Հայրապետանոցում ընդ երկար կենալու համար) յաջորդելով իւր եղբօրը, առաջին գործը համարեց «Առ համօրէն հայասեռ աղինս<sup>2)</sup>, խորագրով մի շրջաբերական կոնդակ հրատարակել ծանուցանելու Դրիգոր Գ. Պահլաւունու կենդանութեամբ՝ իւր ընտրութիւնն ու օծումը և նորա մահը, Եւ որպէս զի Հայ ժողովրդի իւրաքանչիւր դասակարգ հասկանալով կատարի իւր կոչման յատկացեալ պարտաւորութիւնը յօգուտ իւր, աղզի, եկեղեցու և մարդկութեան՝ առանձին առանձին կոնդակ ուղղեց դէպի վանքերի խարազնազգեաց կրօնաւորները<sup>3)</sup>, դէպի վանական միաբանութեանց առաջնորդները (վանահայր<sup>4)</sup>), դէպի վիճակաց եպիսկոպոս առաջնորդները<sup>5)</sup>, դէպի քահանայից դասը<sup>6)</sup>, դէպի աշխարհիկ իշխանները<sup>7)</sup>, դէպի զինուորները<sup>8)</sup>, դէպի քաղաքացիքը<sup>9)</sup>, դէպ ի երկրագործները<sup>10)</sup>, և դէպի կանանց դասը<sup>11)</sup>։

Ներսէս Շնորհալին բարբարոսների հարստահարութիւնից և Հայոցու տգիտութիւնից առաջացած եկեղեցական կարգաց խանգարմունքները կանոնաւորեց Մաքենեաց ուխտից, Յեղինեաց անապատից և այլ նշանաւոր մարդկանցից ստանալով ժամակարգութեան հին օրինակներ։ Նա եկեղեցական ծէսերը և ձեռնադրութեան կարգաւորութիւնը վայելչացրեց ինչ ինչ պատշաճաւոր յաւելուածներով։

Շնորհալին ինչպէս փոյթեռանդն էր Հայրապետութեան վերա-

1). Ընդհ. եր. 141—143. 2). Նոյն եր. 1—23. 3). Նոյն 23—46. 4). Նոյն 46—52. 5). Նոյն 52—69. 6). Նոյն 69—92. 7). Նոյն 92—103. 8). Նոյն 104—106. 9). Նոյն 106—108. 10). Նոյն 108—110. 11). Նոյն 110—112.

բերեալ ընդհանրական գործերում, նոյնպէս և շուտափոյթ կատարումէր իրան եղած բոլոր առաջարկութիւնները ի շինութիւն գայթակղեալ մտաց, ի հոգեկան և ի բարոյական շնութիւն ցանկացողաց:

Նա Սամոստիոյ Թորոս քորեպիսկոպոսի գորութեամբ իմանալով տեղւոյն արեւորդեաց ոմանց ցանկութիւնը գառնալ դէպի Հայաստանեայցս եկեղեցին, շուտով համառօտեց \*) եկեղեցւոյ դաւանութիւնը և ուղարկելով Թորոս եպիսկոպոսին՝ պառուիրեց հրահանգել ցանկացողներին և մկրաել. և այսպէս անհետ եղաւ արեւորդեաց աղանդը՝ նոցա հետզհետէ Հայաստանեայցս եկեղեցւոյ գիրկը մտնելովը:

Ներսէս Շնորհալի կից իւր հայրապետական ներքին գործերին եռանդով սկսեց Գրիգոր Դ. Պահլաւունու օրով սկսուած Յունաց հետ միութեան համար բանակցութիւնը յառաջ վարել, Որովհետեւ ինքն հայրապետական ներքին գործերով զբաղեալ էր, չըկարողացաւ գնալ Կ. Պօլիս, այլ թղթով ծանուցանելով կայսեր Գրիգոր Դ. Պահլաւունու մահը և իւր ընտրութիւնը, և առաջի դնելով իւր Կ. Պօլիս գնալու անհնարաւորութիւնը, առաջարկեց կայսեր, առ ինքն կայսրը գոյ և ժողովրդեան սիրոը խաղաղութեամբ ու գիշով սիրաշահելով, միութեան խնդիրը յառաջ տանի. Բ. որ նա կայսերական հրովարտակով դադարեցնէ Յունաց հալածանքն ու ատելութիւնը դէպի հայ եկեղեցին, ինչպէս ինքն շրջարերական գրերով պատուիրել է Հայոց՝ քրիստոնէական եղբայրութեամբ վարուել Յունաց հետ։ Ընդ սմին Շնորհալին ուրախութիւն էր յայտնում՝ այն բարեգուշակ դէպքի համար՝ որ Քրիստոսի եկեղեցու միութեան պատճառով բոլոր եկեղեցիքն են աշխատում. ինչպէս, Հռովմայ պապը՝ յատուկ պատուիրակ ուղարկելով Կ. Պօլիս, իսկ Ասորւոց պատրիարքը՝ հայ հայրապետանոցին։ Դ. որ եթէ յաջողի կայսեր գոյ արեւելք և դէմ յանդիման խօսել եկեղեցու միութեան համար, խօսակցութիւնը պէտք է կատարուի որպէս հաւասար մարդոց մէջ, իրար հետ վստահութեամբ և համարձակութեամբ, և ոչ թէ կայսեր կողմից՝ տիրաբար, իսկ Հայոց կողմից՝ ծառայաբար, Խօսակցութիւնը պէտք է լինի խաղաղասէր ոգով և առանց բանակուի, միմեանց ուսուցանելու և միմեան-

(\*) Ընդհ. 308—318.

թից ուսանելու մտքով, դատաւոր ունենալով Աւետարանը և Ս. Հարց գրուածները:

Այս առաջարկութիւնը և սորան կյած Հայաստանի եայց եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւնը, \*) Նորհալին ուղարկեց կայսեր, որ պատճառ բերելով իւր՝ տէրութեան գործերով զբաղուած լինելը, իւր կողմից ուղարկեց մի գիտնական աստուածաբան անձն Թէորիանոս անուամբ և Փիլիպպուպօլսոյ Հայոց վոնքի հայտղգի Յովհան Ութման կոչեցեալ վանահօրն, այսպիսի յանձնարարականով. «Որո՞ք ինչ որ այս բանի պատճառով (միութեան համար) պատմեն ձեղ, համարէք թէ մեր թագաւորութեան կողմից են խօսում» :

Ներսէս Նորհալի Թէորիանոսի և Յովհաննէս վարդապետի հետ հաւատոյ դաւանութեան մասին ընդ երկար խօսելուց և ըստ իւր կարծեաց յերկուց կողմանց ինչ ինչ թիւրիմացութիւններին հասու լինելուց յետոյ, դարձեալ համառօտելով Հայաստանեայց կեղեցւոյ դաւանութիւնը \*\*), յանձնեց նոցա որ կայսեր ներկայացնեն. կայսը ի պատասխանի՝ առանձին թղթով առաջարկումէ \*\*\* ) Նորհալուն,

Ա. Նղոփել Եւտիքէսին և այլ հերետիկոսներին, որոնք Քրիստոսի մէջ մի բնութիւն են խոսառվանում.

Բ. Ընդունել Քրիստոսի մէջ մի անձնաւորութիւն՝ միացած երկու (աստուածային և մարդկային) կատարեալ բնութիւններից, Զրհամարել Աստուածոյ որդին ուրիշ, և Ս. Աստուածածնի որդին ուրիշ, այլ՝ նոյնը որդի Աստուածոյ և որդի մարդոյ, որի մէջ մարդկային կամքը միշտ աստուածայնոյն է հետեւում.

Գ. «Սուրբ Աստուած, սրբասացութիւնը առանց «խաչեցարի» -ի և առանց «ե - ի ասել»:

Դ. Աւետեաց տօնը Մարտի 25ին, Ծննդեանը՝ Դեկտեմբերի 25ին, Թլփատութիւնը՝ Յունիար 1ին, Մկրտութիւնը՝ Յունվարի 6ին, Տեառնընդառաջը՝ Փետրուարի 2ին տօնել, և այսպէս Յունաց հետ տօնել բոլոր Տէրունական, Ս. Աստուածածնի և այլ սրբոց տօները:

Ե. Ս. Միւռօնը ձիթենւոյ իւղից անել:

(\*) Ընդհ. եր. 148—196. (\*\*) Նոյն եր. 198—212. (\*\*\*) Նոյն եր. 214—215.

Զ. Ա. Հազորդութեան խորհուրդը խմբուն հացով և գինով ու ջրով կատարել։

Է. Սուրբ պատարագի և միւս խորհրդոյ կատարման ժամանակ բոլոր ժողովուրդը, բացի ապաշխարութեան համար օրէնքով արգելեալներից, եկեղեցու ներսը թողել։

Ը. Ընդունել չորրորդ, հինգերորդ, վեցերորդ և եօթներորդ տիեզերական կոչուած ժողովները, և

Թ. Կաթուղիկոսի առաջարկութիւնը թողուլ միայն ի կամ կայսեր։

Ենորհալին կայսեր այս առաջարկութեանց հետ ստացած լինելով նաև Կ. Պօլսոյ Միքայէլ յոյն պատրիարքի թուղթը, երկուսին ևս պատասխանեց առանձին առանձին թղթով\*) յայտնելով թէ եղած առաջարկութիւնները քննելու համար ժողով է գումարելու, եթէ առաջարկութիւնները ընդունելի լինին ժողովից լիքն ես կընդունի ոչ թէ մոլորութիւնից զէոլ ի ճշմարտութիւն դառնալու, այլ աստուածային սիրոյ հազորդութեան համար։

Ենորհալին Յունաց առաջարկութիւնները քննելու համար ի ժողով հրաւիրեց\*\*) Հայաստանեայց եկեղեցւոյ բոլոր հոգեւոր ներկայացուցիչներին սկսեալ Աղուանից աշխարհից. բայց զեռ ժողովը չըգումարուած՝ 1173 թուին օդոստոսի 13 ին վախճանեց\*\*\*) ու թաղուեց Հռոմելայի մէջ Դրիգոր Պահլաւունու մօտ, որով և չըկայացաւ ժողովը և այն՝ թերեւս այցելութեամբ ողորմածն Սատուծոյ։

Ներսէս՝ շնորհալի հանդիսացաւ ոչ միայն հայրապետական ներքին գործոց կառավարութեամբ, այլ և իւր հոգեւոլորար և շնորհաղեղ երկասիրութիւններով\*\*\*\*) որոնք զրուած են Արձակ և Զափարերական։ Ենորհալու Արձակ զրուածոց մէջ նշանաւորն է Թուղթ Ընդհանրական, որ երեք մասն է բաժանվում, Ա. Հովուական հրահանգներ՝ առ ամենայն դասս հայասեռ աղգիս. Բ. Քըղթակցութիւնք Յունաց արքունիւաց և պատրիարքարանի հետ միութեան խնդրոյ առիթով. Գ. մասնաւոր անձինքներին գրած Թըղթեր, նոյն հարցասիրութեան բաւականութիւն տալու համար։ Միւս արձակ երկասիրութիւնները ճառեր և մեկնութիւններ են։

(\*) Ընդհ. 219—229. (\*\*) 290—292. (\*\*\*) Նոյն եր. 227. (\*\*\*\*) Եկեղ. պատմ. Մ. Վ. Մաւրատեան 502—514.

րոնցից Մատթէոսի աւետարանի մեկնութիւնը որ վերահաս մա-  
յուան պատճառով կիսատ էր մնացած ամբողջացրել է Երզնկա-  
ցին։ Շնորհալու երկասիրութեանց մէջ առանձին տեղ բռնումէ  
Հաւատով խոստովանիմ։ աղօթքը, որ 24 տուն է ըստ օրական  
ժամուց։

Շնորհալու շափարերական երկասիրութիւնները երկու տեսակ  
են։ 1. Հին հայկական տաղաչափութեամբ, որպիսի են Շարականի  
մէջ ԳԿ. Աւագ օրհնութիւնը, Եօթանառնից, Նինուէացւոց, և  
Մեծի ողոհոց կիւրոկէ տւուրց շարականները. այլ և Շաղկազար-  
դի հարցը, Հոգւոյ գոլստեան չորս պատէերը, Վարդավառի եր-  
կու պատէերը, Վերափոխման երկու պատէերը, Յովհաննաւ և  
Մարգարէից Կ2. Հարցերը, Հրեշտակապետաց, Վարդանանց և  
Վեռնդեանց շարականները։ Յիշեսցուքը, Զարթէքը և Ի քէն  
Հոյցեմը։ 2. Արարական տաղաչափութեամբ՝ Այսօր անհառը,  
Նորոգողը, Աստուած անեղը, Ճաշու ողորմեայից երգերը, Նայեաց  
սիրովը, Առաւոտ լուսոյ, Աշխարհ ամենայնը և Յիսուս որդին։

Շնորհալին բացի այս հոգեւոր երգերից՝ որոնք զեղուն են ուուրք  
գրոց իմաստներով, աստուածարանական հմտութեամբ և քրիս-  
տոնէական ամբիծ հաւատով՝ զրել է արարական տաղաչափու-  
թեամբ Ալբ Եղեսիոյ, և Վիպասանութիւն, որով համառօտել է  
նա Հայոց պատմութիւնը։ Շնորհալին ունի դարձեալ շատ երգեր  
ու գրածներ որոնք այստեղ չեն յիշվում։

## ԳԼ. ՓԹ.

Գրիգոր Դ. Ցղայ մականուանեալը, որ Շնորհալու Վասիլ Եղբօր  
որդին էր, զնացած լինելով ուրիշ տեղ, երբ լսեց Շնորհալու ծանր  
հիւանդութիւնը շտապեց շուտով հասնել, բայց ճանապարհին  
պատահելով նկոնիոյ սուլթանին, նորանից մեծ պատուով ընդու-  
նուեց, որով և ուշացաւ և հազիւ կարողացաւ Շնորհալու յու-  
ղարկաւորութեան հանդիսին հասնել։ Այս տիտոք հանդիսից յե-  
տոյ ներկայ եղող բազմութիւնը միաձայն աղաղակելով ինդրեցին  
Գրիգոր Ցղային կաթուղիկոսացնել, և եպիսկոպոսաց ժողովը ի  
նկատի ունելով ժողովրդեան ցանկութիւնը, օծեց նորան կաթո-  
ղիկոս և նոյն օրը որոշեց Շնորհալու տօնը կատարել իւրաքանչիւր  
ասրի։

Գրիգոր Դ. Տղայի կաթուղիկոսութեան լուրը Կ. Պօլիս հասնելուց յիտոյ Կիռ Մանուէլ կայսրը Շնորհալու մահուան պատճառով միսիթարութեան թուղթ գրեց և յանձնեց Թէորիանոսին Հռոմէկայ՝ նորընտիր հայրապետին հասցնելու համար, որ ճանապարհին արգելքների հանդիպելով՝ ուրիշի ձեռքով ուղարկեց:

Գրիգոր Տղայ ի նկատի ունենալով որ Շնորհալուն արած Յունացին առաջարկութիւնների պատճառով շատերը, մանաւանդ Մեծ Հայոց հոգևորականք տժգոհ էին, ուստի և կայսեր ի պատասխանի գրած թղթով առաջարկեց առաջարկութեանց վերայ չը պնդել մանաւանդ որ դաւանութեան չեն վերաբերում։ Այս թուղթը Գրիգոր Տղայ ուղարկեց մի յոյն Կոստանդին անուամբ վարդապետի ձեռքով, խնդրելով նոյն ինքն վարդապետին Արապօլսոյ և շրջակայից յոյնների վերայ եպիսկոպոս ձեռնազրել տալ։ Գրիգորի թուղթը հասաւ կայսեր՝ երբ նա պատրաստվումէր Խկոնիոյ Առևտանի հետ պատերազմել։ Ուստի և պատուիրեց թղթաբերին սպասել Կ. Պօլսում, մինչեւ որ ինքն անյաջող պատերազմից վերադառնալով՝ Գրիգոր Տղայի առաջարկութեան համեմատ թղթատար Կոստանդին վարդապետին արքեպիսկոպոս ձեռնազրել տուեց, չը պնդելով ինն առաջարկութեանց վերայ՝ միայն յոյն եկեղեցւոյ դաւանութիւնը համառօտելով՝ ուղարկեց Գրիգոր Տղային առաջարկելով նորան եպիսկոպոսներով հանգերձ անձամբ գնոլ Կ. Պօլիս և բերան առ բերան խօսել<sup>\*</sup>)։ Կ. Պօլսոյ յոյն Միքայէլ պատրիարքն ևս իւր, Անտիոքայ յոյն սլատրիարքի և 17 մետրապօլիտների ստորագրութեամբ ուղարկեց յոյն եկեղեցւոյ դաւանութիւնը<sup>\*\*</sup>)։

Գրիգոր Տղայ կայսեր և պատրիարքի թուղթերը ստանալուց յետոյ ժողովով պատասխան տալու համար հրաւէր ուղարկեց դէպ ի Մեծ—Հայք, Արեւելք, Երուսաղէմ և դէպ ի Մեաւ Լեաւոն գնալ, ժողովել Հռոմէկայ։ Ժողովը կայացաւ 1179 թուին Զատկի տօնին, ուր Ներսէս Լամբրօնացի մի ընդարձակ և պերճախօս ատենաբանութիւն արեց սիրոյ և միաբանութեան համար։ Այս ատենաբանութիւնից յիտոյ քննութեան առնուեցին կայսեր և պատրիարքի թղթերը<sup>\*\*\*</sup>)։

(\*) Ընդհանուր 233—242. (\*\*) Կոյն 242—248. (\*\*\*) Կոյն 248—250.

ժողովի վճիռը, ստորագրուած միայն 33 եպիսկոպոսներից, լրոնց երկրորդն էր Ազուանից Ստեփաննոս կաթուղիկոսը և վեցերորդն Ներսէս Ամբրօնացին, Գրիգոր Տղայ ուղարկեց Պոլիս յատուկ թղթատարներով՝ որոնք Աւարտիայում արգելքի հանդիպելով յետ գարձան։ Գրիգոր Տղայ նորից պատրաստվումէր ժողովի որոշումը ուղարկել, լսուեց կայսեր և պատրիարքի մահը ուստի և յետաձգեց<sup>\*)</sup>։

Որչափ և Կիո Մանուէլ կայսեր և Միքայէլ պատրիարքի մահուամբ միութեան գործը խափանուեց, սակայն Հռոմէլայի Բ. Ժողովի որոշումը և Ներսէս Ամբրօնացու ատենաբանութիւնը մեծ տժգոհութեան առիթ էր տուել աղջին։ Զորոգետեցիք, Սիւնեցիք, Նիրակացիք և Պրեթէ բոլոր արեւելեան Հայք անբաւական էին. Գրիգոր Տղային չէին կամենում այլ ևս կաթուղիկոս ճանաչել, այլ Բարսեղ Սնեցուն կամենում էին օծել և նորան հնազանդել։

Գրիգոր Տղայ իւր գէմ կուտակուած ամբաստանութեանց համար նախատանաց թղթեր գրեց բոլոր արեւելցւոց և յատկապէս Զորոգետեցւոց, որոնք ըլշատանալով կաթուղիկոսին և Ամբրօնացուն գրած թղթերով բողոքեցին նա և Ռուբինեանց Աւոն իշխանին, որ նա իբրև Հայրենի եկեղեցու նախանձախնդիր՝ պաշտպանէ եկեղեցին Գրիգոր Տղայի և Ամբրօնացու օտարասիրութիւնից։

Գրիգոր Տղայ և Ամբրօնացի իրանց արդարացնելու համար սկսեցին մեղագրել Տուտէորդեանց իբրև Հակաւակասէր և անխաղաղասէր անձինք, մահմետականաց կիժղոյլների անուանելով նոյա. Խոկ եկեղեցու մէջ ներմաւծութիւնները արդարացնումէին առելով որ ինքն Աւոն իշխանն էլ եւրոպացիներից շատ բան ներմաւծել է իւր արքունեաց մէջ։

Որչափ որ արեւելեայք կիլիկեցիներից անխաղասէր են կոչվում և դանազան նույսուացուցիչ մակղիբներով են յիշտակվում, ուսկայն արեւելեայց ջանքը արդիւնաւ որուած է նորանով՝ որ Հայուսանեացու եկեղեցին Հաստատ որպէս իւր առանձնութիւնը և աղքայնութիւնը, որ սակաւիկ մի ևս՝ զոհ պէտք էր գնար կիլիկեցւոց օտարասիրութեանը։ Ավոնոս որ մինչև ցայսօր ըլգտնուեցին արեւելեայց ամբաստանագրելն ու բողոքները, որոնցով երկու կող-

մանց ևս կարելի կը լինէր արժանի դատաստան անել և պատմութեան մէջ հարկաւոր տեղը տալ իւրաքանչիւր կողմին:

Հռոմեայի հայրապետանոցը և կիլիկեցիք միութիւն առելով հաւանումէին Քրիստոսի եկեղեցւոյ միջից թշնամութեան, հակառակութեան և առելութեան յնջումն, բայց Յոյնք և Լատինք նոյնպէս չէին մտածում։ Հռոմայ ջանքն էր միութեան սկառիւակով իւր գերիշխանութեան տակ առնել Հայաստանեայց եկեղեցին. իսկ Յունաց ջանքն էր ջնջելով հայ եկեղեցւոյ անկախութիւնը՝ ժողովրդեան հետ ձուլել յոյն տարրի մէջ, և այս աւելի քաղաքական նպատակով, որ հայք իրեւ առանձին աղք և եկեղեցի՝ խոջրնգոտն ըլլինէին Յունաց աշխարհակալութեան տենչանքին, այլ ընդհակառակն՝ գործիք դառնային։

Միութեան գործը առ կախ մնալոց յետոյ, Յոյնք աւելի ևս կառապետամբ սկսեցին հալածել Հայերին, նկատելով մանաւանդ Հոյոց համակրութիւնը գէպ ի խոչակիրները, Գրիգոր Տղայ սկառտաւորուեց Փիլիպպուպօլսոյ հայ Գրիգոր եպիսկոպոսին թղթով Պապի մօտ ուղարկել խնդրելու նորա միջնորդութիւնը Եւրոպացւոց մօտ, որ նոքա սանձէին Յունաց առելութիւնը գէպ ի Հայք \*):

Պապը փոխանակ կատարելու ինչ որ իրանից խնդրվումէր, ուղարկումէ Գրիգոր Տղային լատին եկեղեցւոյ ծխարանը, Եմիփորու ու Պալիում \*\*) և իւր թագը և թղթով առաջորդկում է—Ա. Հոգորդութեան բաժակի հետ ջուր խառնել, Բ. Ծննդեան տօնը Եկեղեմքիրի 25-ին կատարել. Գ. Ս. Միւռոնը ամեն տարի Աւագ

(\*) Համ. հատ. Գ. երես 142.

(\*\*) Պալիում եկեղեցական պատուոյ նշան էր որ տալիս էին պապերը արքեպիսկոպոսներին իրեւ ամենաբարձր պատուանշան։ Պալիում պատրտստելու համար երկու սպիտակ գառն Հռոմում. Ս. Ագնէսի եկեղեցում օրհնելուց յետոյ կուսանաց վանքերում բուծանումէին և կտրոց ժամանակ գեղմն խուզելով երկմատնաշափ լայնութեամբ ուրարաձև ժապաւէն էին պատրաստում և Ա. Պետրոս առաքելոյ տօնի օրը նորա գերեզմանի վերայ օրհնելուց յետոյ ուղարկումէին ում՝ որ կամենումէին։

Պալիումը սկզբում արվեպիսկոպոսներին, յետոյ, անհրաժեշտ դարձաւ Մետրապօլիտների համար որմնք պարտաւորուած էին շատ մեծագնի (420.000 գաղղ. ֆրանք) ստանալ, և այս գէպքում Պալիումը ծառայումէր պապական իշխանութեան որպէս մի պարաւանդիչ կապ պապի ստորագրելութեան տակ մտնելու. (Յանոսի. Յաղագոս պապին. Ժ. Բ. 160—162).

Հինգշաբթի օրը օրհնել, և նոյնն ի կեր արկանել միքտութեան ջրի հետ, կնքելու և ձեռնազրելու ժամանակ, Դ. Եպիսկոպոսի ձեռնազրութիւնը կիւրակէ օր կատարել և գլուխը օծել. քահանայի և այլ ստորին պաշտօնէից ձեռնազրութիւնը՝ շաբաթ օրը կատարել և քահանայի ձեռքը օծել։ Գրիգոր Եպիսկոպոս ստանալով Պապից յիշատակեալ ընծայքը և թուղթը՝ վերադրձաւ և յանձնեց կաթուղիկոսին, որ Տարսոնումն էր գտնվում։

Հռովմայ պապը լսելով որ Սալահատդին առել է Երուսաղէմը, որ Խաչակրութիւն կազմելով ուղարկեց գէպ ի Պաղեստին, և թղթով խնդրեց Գրիգոր Տղային օգնել այս արշաւանքին հարկաւոր ձեռնտութիւնը անելով։ Խաչակիրք երբ հասան Սելեկիա քաղաքի մօտ, Աւոն իշխան և Գրիգոր կաթուղիկոսը ընդ առաջ գնացին և բերին մինչև Կիլիկիա, ուր և սիրով հիւրնկալեցին և այս հիւրնկալութիւնից բոլորովին գոհ՝ արշաւանքի առաջնօրդ կայսրները խոստացան թագ տալ Աւոնին, ուստի և թագադրութեան հանդիսի համար Լամբրօնացին թարգմանեց Լատիներէնից թագաւորի օծման կարգը. բայց թագադրութեան հանդէսը չը կատարուեց, որովհետեւ Խաչակիրք շտապում էին գէպի Պաղեստին։

Գրիգոր Տղայ մօտ 20 տարի հայրապետական իշխանութիւնը վարելուց յետոյ 1193 թուին վախճանեց և թաղուեց Հռովմայում իւր հօրեղբարց ( Գրիգոր Պահլաւունու և Ներսէս Շնորհալու ) մօտ։

Գրիգոր Տղայի երկասիրութիւններն են այն թղթերը, որ նա գրել է միութեան խնդրի առիթով, և մի քանի յանդիմանական թղթեր գէպ ի հաղբատեցիք, Տուտէորդին և հիւսիսային վարդապետները։ Բացի այս թղթերից՝ Գրիգոր Տղայ գրել է նաև « Ողբ Երուսաղէմի »։

Ներսէս Շնորհալու հայրապետութեան վերջին տարիներում և Գրիգոր Տղայի օրով Հայ եկեղեցական գործերում մեծ դեր էր խաղում Տարսոնի արքեպիսկոպոս Ներսէս Լամբրօնացի։

Լամբրօնացու հայրն Լամբրօնի տէր 02ին իշխանն էր, որ ամուսնացած լինելով Շնորհալու Շահան եղբօր Շահանդուխտ դըտեր հետ՝ ունեցաւ հինգ արու զաւակ՝ որոնց մէկն էր Ներսէս Լամբրօնացի, որ սկզբում Սմբատ էր կոչվում։

Ներսէս յարգանդէ մօրն ուխտուած էր հոգեսրական կոչման. ուստի և մանկութեան հասակում Վկեռայ վանքում ուն Յով-

Հաննէս՝ ճգնազգեաց վարդապետի մօտ ուսացաւ կրթութիւն պատշաճ իւր կոչմանը, յետոյ ուսու յունարէն, լատիներէն և եղիսպառէն։ Ներսէս 16 տմաց էր երբ մեռաւ նորա հայրը կու կելով ի ժամանակին՝ իւր շինած Սկեռոյ վանքին վանահայր կարգել Ներսէսին։ Մինչ Ներսէս խմանալով այս կամենումէր խոյս ուղ անապատները, նորա մայր Շոհանգուխտ իւր հօրեղբայր Շնորհալու մօտ տորաւ նորան, որին Շնորհալին արեղոյ Ճեռնա, զրելուց յետոյ ուղարկեց Սեռու Աեան ոմն աիրացու Եղեցիկալ Սուեփան վարդապետի մօտ աւելի ևս կատարելազօրծուելու համար, 18 տարեկան հասակում Լամբրօնացին իւր հայրինի քաղաքում քարոզիչ կարգուեց, աեսնելով որ կամենումէն իրան եղիսկոսու Ճեռնազրել տալ Լամբրօնի վերոյ, յանձնելով միանգամայն Սկեռոյ վանքի վանահայրութիւնը, առանձնացաւ Աաղրու վանքը։ Սաղրու վանքում ևս տարածուեց Լամբրօնացու հոչակը և ինքն, իրան զիմոզների երեսից հանգիստ ցը գանելով խոյս տուեց այլ առանձին տեղ, և Շնորհալու հրամանին համեմատ միայն երբեմն երբեմն գնումէր Հռոմելայ, և այսպիսով ևս Շնորհալու մոհուանը ներկայ գոնուեց։

Դրիգոր Տղայ յաջորդելով Շնորհալուն, 1176 թուին գրեթէ ստիպմամբ 23 ամեայ Լամբրօնացուն Տարսոնի և Լամբրօնի ու շրջակայից արքեպիսկոպոս Ճեռնազրեց։ Լամբրօնացին շուտով տռաջնորդական բոզմազբաղ կեօնքից խոյս տուեց գէտ ի Աաղրու անապատը ուր գրեց եկեղեցւոյ կարգուորութեանց և Ա. Պատարագի մեկնութիւնը։ Լամբրօնացին սրտեռանգն վափագով կամենում էր Սեպուհ Աեան՝ Առւատորչի ճգնարանը ուխտի գնալ, բայց քանիցս կէս ճանապարհից յետ գարձրին, վերջապէս ծպտեալ կերպարանքով գնաց Վիսրու կղզին։ մինչեւ որ կիմանացին նորա ուր լինելը՝ բաւական հմտացաւ յոյն լեզուին, և հուսկ ուրիմն աեսնելով որ անհնարին է իրան առանձնութեան մէջ մընալ, վերագարծաւ իւր աթոռն Տարսոն և սկսեց հովուել իւր ժողովորդը։ Հռոմելայի Բ. Ժողովին ներկայ գոնուեց և Հռոմելայում եղած ժամանակ յունարէնից թարգմանեց Յովհաննու Յայտնութեան մեկնութիւնը։ Սկեռոյ վանքում 1181 թուին գրեց Աաղմասի մեկնութիւնը, գրեց Սոլոմոնի Առակաց, Եմոսութեան, մազոյովի և 12 Փարք Մարգարէնից գրուածոց մեկնութիւնները և բազմաթիւ ճառեր։ Յունարէնից և լատիներէնից ինչ ինչ գրքեր

թարգմանեց. յունարէնից, լտախներէնից ու եղիսպտարէնից թարգմանելով սըրոց վկայաբանութիւնը և կարգի դնելով Վկայակրի ու Ներսէս Շնորհալու հօրեղբացք Եղիսպտոսի եպիսկոպոս Գրիգորի թարգմանուծ վկայաբանութիւնները, կազմեց «Հարանց վարք» գիրքը: Կ սրտիւ Շնորհալոյ գրեց մի ներբող ստանաւոր, և Այսօր յարեաւ, Նորագեալ կղզիք, Համբարձման և Որդւոց ու թուանց Ա. Գրիգոր Նուռաւորչի շարականները:

Ներսէս Համբրօնացի իւր համարձակ ատենախօսութեան համար համեմատվումէ Դիմասթենէսի և Վիկերօնի, և կոչվումէ արժանի յաջորդ Պողոս առաքելոյ: Ներսէս Համբրօնացի վախճանուեց 46 տարեկան հասակում:

Բ. ԺՈՂՈՎ. ՀՅՈՄՄԱԼԱՑԻ 1179 Թ.ՈՒՒՆ\*):

Ա. «Հաւատում և խոստովանումնենք պաշտելի և երկրպագելի սուրբ Երեք անձնաւորութեան բաժանուած՝ մի Աստուածութիւն, որոյ Հայր և Որդի և Սուրբ Հոգի անունները յատկութիւնն են հաստատում, իսկ մի Աստուածութիւնը՝ մեզ ցոյց է տալիս Երեք անձնաւորութեանց Համագոյութիւնը, անձնաւորութեամբն՝ բաժանուած և Աստուածութեամբն՝ միաւորեալ, ըստ Սերոբէից սրբասացութեան Երեւ «Առաք» և «Տէր»)

Բ. «Խոստովանումնենք Երեք անձնաւորութիւնից մինը. Հօր բանը և ծնունդ ծոցածին Որդին, Հօր կամքով և սուրբ Հոգոյ գործակցութեամբ իջած Մարիամ ամենասուրբ կուսի արգանդը, ուր և թանձրանալով Բանը, պյսինքն խառնուելով մեր զգալի մարմնոյ հետ, մեր բանական Հոգւոյ միջնորդութեամբ, անձառ միաբանութեամբ և անշփոթ խառնմամբ անպական կուսի արգանդից Աստուած ծնուեց, վասնորոյ մարմնացեալ Աստուածոյ ծնողին Աստուածուցին ենք դաւանում:

Սա ինքն մարմնանալիս, ոչ թէ աստուածեղէն զօրութեամբ այլ խորհրդական իրաւամբք և արդարութեամբ տնօրինեց մեր փրկութիւնը: Որովհետեւ մեր ընութիւնը, որ Աստուածուց անմեղ էր ստեղծուած և չըկարողացաւ իւր բարձրութեան մէջ մեալ, այլ սատանայի պատրանքով և դաւաճոնութեամբ խաբուած՝ ընկաւ, իսկ Աստուածային բնութեան հետ խառնուելուց յետոյ լուսաւորուեց, . . . . և այսովէս մարդացեալ Աստուածը մեր մեղանչական մարմնոյ մեղքը իւր մարմնի մէջ դատապարտեց . . . .

Գ. Զեր (Յունաց) նման խոստովանումնենք Քրիստոսի մէջ Երկու ընութեան անձառ միութիւնը . . . . որովհետեւ մեր մարմնոյ բնութիւնը առաւ՝ իւր

բնական շարժմամբ սորան (մարդկային բնութեան) կենդանացնելու համար և ով որ մարդկեղեն բնութեան յատկութիւնը Քրիստոսի մէջ զլանայ, ուրանումէ և իրաւամբ փրկութիւնը:

Տեսնվումէ նորա մէջ և կամք, որ մեր բանական հոգւս շարժումն է, . . . . Մարմնոյ ներգործութիւն էլ է տեսնվում, որ յայտնի լինի թէ մեր փրկութիւնը աշխատութեամբ և ոչ թէ զօրութեամբ է կատարուած, որ աւելի զօրութիւն ստանանք յաղթելու թշնամուն. և որովհետեւ կամենումէր (Յիսուս) բնականի համեմատ վարուել հրաժարվում էր մահից և ամաչումէր ընդ նմին և տրտմում:

«Աստուածաբար կամենումէր և այս պատճառով էլ աստուածութեան կամքը մարմնին էր հետեւեցնում և ասում. «ոչ իմ կամ, այլ քսդ լիցի». յայտնի է թէ և իմն ըստ աստուածութեանս լիցի. Արհամարհումէր ամօթը, առ ոչինչ էր համարում երկիւղը, և այսպէս մարմնոյ կամքը աստուածեղենին կամքին հետեւեցնելով, խաչի խորհուրդը յրագործել. որով հասարակաց փրկութիւնը գործեց և իւր մէջ եղած մարմնի սքանչելի բարձրութիւնը ստացաւ ըստ առաքելոյն. Աորա համար էլ Աստուած նորան աւելի բարձրացրեց, որ Յիսուսի Քրիստոսի՝ անունով կրկնուի ամէն ծունը. Մարդկապէս ներգործումէր, և ահա քաղցեց և վաստակեց (դադրել) և արտասուեց. կերաւ և խմեց, չարչարուեց և մեռաւ. յայտնի է որ այս ներգործութիւնները բնականաբար Աստուածոյ չեն. այլ նորան վերադրվում են մարմնի մէջ միաւորութեան համեմատ» . . . .

( Եաբունակէլէ )

Յ. Վ. Մ.

— 10 —

## ԲԱՆԱԿԻՐԱԿԱՆ

### ՀԱԴԵԲԱՆԹԻՔԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

( ԸՍՏ Ֆ. ՀԱՐՄՈՒ ) .

( Եաբունակ. Աբովյան, թ. Զ. ) .

6. Պղատոնի հոգերանութիւնը. Սոկրատէսի աշակերտը, Պղատոն (428—348 թ. ն. ք. ծ.) հեղեկան գործակատարութիւնների կամ կարողութիւնների դաս - դաս բաժանելու առաջին հիմնադիրը կարող է համարուիլ. Պղատոնի հոգերանական հետազօտութիւնը ներկայացնում կրօնական - բարոյական տիպ, և ձգտումէ ցոյց տալու հոգւս անմահութիւնու դուրս բերելու մի սկզբունք, որ մարդոց բարոյական յատկութիւնների